բիոն հագած. կրունկներն իրար կողքի և ոտների ծայրերն հակառակ ուղղութեամբ։ Քրիստոսի գլխի մազերը երկու ոլորուն և երկար կաւիկներով իջնում են ուսերից էլ շատ ցած. անդամների ոչ մի կարկամունք կամ ցաւի արտայայտութիւն, որ ենթադրել է տալիս, թէ առնուած է մի նախնական օրինակից։ Աջեցեալի երկու կողմից ծունկ են չոքած, գլուխներն ու դէմ-



Պատկ. 18 Լուս. Պրոֆ. Օրբելիի

Խաչարձան Սեւանում, 1653 թ.

քերը վեր բարձրացրած՝ աղաչաւորի դիրքով՝ երկու ֆիդուր, որ անշուշտ Յովսէփ և Նիկոդիմոսն են, և ոչ երկու կանայք, ինչպէս նկարագրել էր մեզ հանգուցեալ Գիւտ եպիսկոպոսը։

Աջելութեան տակ աւերումն դժոխոց. Յիսուս դարձեալ երկար կաւիկներով, սրածայր մորուքով, գօտէկապ երկար պարեգօտով, ոտքերի տակ «դրունք դժոխոց», աջով բռնել է Ադամի ձեռքը. վերջինս էլ իւր հերթին բռնել է Եւայի ձեռքը։ Յիսուս ձախով խաչագլուխ գաւազան ունի, ներքևի ծայրը նիզակաձև, որ խրել է գալրուած վիշապի բերանը. նման մի վիշապ էլ աջ կողմից։ Աւելի բարձր՝ Յիսուսի աջ կողմից խաղողի ողկոյզներով կենաց ծառն է և դորանից էլ բարձր արձանագրութեան տակ՝ Ամենակալն է, նստած չորեքկերպեան աթոռի վերայ, որի նշանակների դասաւորութիւնը աւետարանների կարգով չէ, այլ վերին շարքում մարդ և արծիւ, ներքևում առիւծ և եզ։ Ամենակալը զուտ արևելեան զգեստաւորութեամբ, այսինքն երկար պարեգօտի վերայ հագել է աբայ. գլխի մազերը երկար կաւիկներով իջնում են ուսերից կրծքի վերայ, թաւ, սրածայր մորուքով, աջով խաչակնքում է, ձախը կրծքին դրել։ Նորա տակ մի քառանկիւնու մէջ Աստուածածինն է, Յիսուս մանկանը խանձարուրքի մէջ պատած՝ գրկել է ոչ սովորական ձևով, այլ կիսահորիզոնական ուղղութեամբ, որի նման մի օրինակն էլ ունինք Հաղբատում, Սմբատի որդի Քրդի յիշատակին, եղբայր տեառն Բարսղի, Սմբատ և Ուքան որդիների կողմից ՈԿԹ = 1200 թուին կանգնած խաչքարի վերայ։ Նորա տակ եղած առանձին քառանկիւնու մէջ երկու կենդանիների՝ եզ և էշ՝ պատկերագրութիւնն է, հաստատ ապացոյց, որ Տրդատը կամեցել է ծննդեան տեսարանը ներկայացնել։

Սրանից էլ ցած երեք թագազարդ ֆիդուրներ կանգնած են իրար կողքի, ձեռքերն աղօթաւորի ձևով բռնած, ափերը դէպի դուրս, որ մինչև այժմ էլ մնացել է Հայոց եկեղեցու մէջ նորընծայ ձեռնադրուողների համար, երբ բեմի վերայ ծունկ չոքած, երեսները դարձնում են դէպի ժողովուրդը։ Առաջին միտքը, որ ծագել կարող է, նրանց նոյնացումն է մոգերի հետ, բայց դրանք արդարների դասն են վերջին դատաստանի տեսարանի հետ կապուած, իբրև խաչարձանի ձախ կողմի պատկերագրութեան մաս, ապա թէ ոչ նրանց բերած ընծաները մատնանշած կ'լինէր արուեստագէտը։ Յիրաւի հակադիր կողմից՝ վերից վար վերջին դատաստանն է պատկերաւորած. ամենից բարձր Յիսուսի գլուխն է, աջից և ձախից արեգակն ու լուսինը, իսկ սրանց տակը չորս հրեշտակներ, փողերը բերաններին։ Ապա սրանց տակը քառանկիւնու մէջ՝ մեղքի և արդարութեան կշիռքն է. սատանաներից մէկը մէջքով բարձրացնում է մի թաթը, իսկ միւսը փայտով